Արձանագրություն N 2
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/18» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **11.12.2018թ.**
ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մկրտչյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Ջեյնալյան, Կ. Արամյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Ղավալյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/18» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Մկրտչյան)

Ընդունել ի գիտություն, որ աճուրդը սկսվել է www.eauction.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ **2018 թվականի դեկտեմբերի 10-ին, ժամը 10:30 -ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3 դեմ - 0:

2. «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/18» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Մկրտչյան)

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	ԱՁ Գրիգոր Բաբայան
2	Սփլեշ Ուոթեր ՍՊԸ
3	Էվրի Դեյ ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա. Մկրտչյան)

3.1 Գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	Ընկերություն	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ			Մասնակցության իրավունք
				Արժեք	ԱԱՀ	Գին	
1	ըմպելու ջուր	ԱՁ Գրիգոր Բաբայան	3078000	2106000	0	**2106000**	
		Սփլեշ Ուոթեր ՍՊԸ	3078000	2565000	513000	3078000	
		Էվրի Դեյ ՓԲԸ	3078000	2842200	568440	3410640	Մերժված

3.2 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Մկրտչյան)

4.1 ԱՁ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդի փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, իսկ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդի փաթեթի էլեկտրոնային ստորագրությունը առկա չէ: Գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացնել մասնակցին հայտի ճշտման համար:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել է հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ԱՁ Գրիգոր Բաբայան	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

(Ա. Մկրտչյան)

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ծանուցելու մասին

(Ա. Մկրտչյան)

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 11.**12.2018թ.** հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Մկրտչյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 4-րդ կետում նշված ճշտման ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ (321 սենյակ) հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Մկրտչյան
Անդամներ՝		Վ. Զեյնալյան
		Կ. Արամյան
Համակարգող՝		Լ. Ղավալյան